

ՄԵԼԿ

Հարկումն լինել 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց նվիրագրատուն մէջ
Օտարաբարակացիք զինում են ուղղակի:
Խոֆուս, Редакция «Мелк»

Խմբագրությունը բաց է առանձնահատկ 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Յայտարարությունն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարություններն ընդունվում են
կիրակի օրը և 2 կոպեկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Կարճեալ խնդրում ենք «ՄԵԼԿ» բաժնա-
նորդներին, որոնք մինչև այժմ չեն վճա-
րել մեր լրագրի անցեալ կամ ներկայ տա-
րվայ բաժանորդական վճարը, շուտով հաս-
նել մեզ իրանց պարտքը:
Մի և նոյն ժամանակ յայտնում ենք որ
«Մշակի» կարելի է գրել երեք ամսով,
վճարելով 3 րուբլ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐՆԵՐԻ ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒ
ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐԻ—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱ-
ՅՈՅ ԽՆԴԻՐԻ ՖՐԱՆՍԻԱՆ ԱՆՂԼԻՆՆԵՐ ՆԱՄԱԿ ՊԱՐՏ-
ԿԱՍՏԱՆԻՑ—ՀԵՌԱԳԻՐՆԵՐԻ—ՊԱՏԱՐԱԿԱՆՆԵՐԻ
—ՑԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՆԵՐԻ
ՆԱՄԱԿ ԹԻՐԵՔԻԱՅԻՑԻ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՆ

Բազու, 10 հոկտեմբերի

«Մշակի» № 172 ներքին լուրերի կարգում
վիճենայի ֆրանսիական «Journal d'Orient» լը-
րագրին բաժանորդական ցուցակի մէջ և իմ
անունս է նշանակված: Այս պատճառով պա-
տիւ ունեմ յայտնել պատուելի խմբագրութեանդ,
որ ինձանց ստացված չորս րուբլին ոչ թէ իմ
սեփականութիւնից էր, այլ իմ տնօրինութեան
յանձնված մարդասիրական ընկերութեան հա-
սարակաց ընթերցարանին պատկանեալ գումար-
ից, որպէս բաժանորդագին վերոյիշեալ ֆրան-
սիական լրագրի: Յանկալի էր, որ այդ թերթի
համարները չուտով ստացվէին:

Ինչ որ կը վերաբերի իսկապէս օգտաւէտ լը-
րագրի բաժանորդութեանը կարող եմ յուսադ-
րել ձեզ, որ այստեղի բաժանորդութիւնը արժա-
նի կը լինի բոլոր հայերի պատւին և ա-
պացոյց նրանց ազգային եռանդին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԵՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 6 հոկտեմբերի

Անցեալ անգամ ձեզ խոստացայ խօսել մի
մարդու գործունէութեան վրա, որը տեղ է ամ-
բողջ քառօրե դար. տարակոյտ չը կայ, որ ժա-
մանակի երկարատեւութիւնը միշտ չէ կարող լի-
նել նոյնպէս կրիտերիում որ և իցէ գործունէու-
թեան արդիւնքը չափելու և ըստ արժանոյն գնա-
հատելու համար. այդ կը լինէր մի և նոյնը եթէ
մարդկանց մտաւոր կարողութիւնը ու օգտաւէ-
տութիւնը չափէինք նոցա տարբերով: Բայց այս-
պէս չէ այն մարդու գործունէութեան նշանակու-
թիւնը, որի վրա ուղում եմ խօսել: Մ'անգու-
մէի է ֆրանսիական խմբագիր պ. Գանտսենի քը-
սան տարուայ մէջ կատարածը ամենայն վստա-
հութեամբ կարծէ մի քանի խմբագիրների երկու
հարիւր տարուայ կատարելի գործունէութեան,
եթէ նոցա արածները և յառաջացրածների վրա
զաղափար կազմենք արդէն նորանով, ինչ կա-
տարել են ուրիշները 23 կամ 34 տարուայ ըն-
թացքում...

Բայց նախ քան խօսքս սկսելը ում վրա ու-
ղում եմ, կը չեղվեմ խնդրից հետեալ դիտողու-
թիւնով: Ամեն կողմից ազդողակում են մեր մէջ,
ինչպէս այդ կողմը, այնպէս էլ այստեղ, թէ հա-
կիր ոտ են դրել արդէն գիտականութեան և

թէ և պ. Ա. Ապրեսիանցը սկսած է բաժա-
նորդագրութիւնը, բայց սա սահմանափակված է
զործավար, բայց համակրելի երիտասարդութեան
չըլանով:

Վաճառական կամ ունեւոր դասակարգի մէջ
բաժանորդագրութիւնը սկսված է ծերունի Գէորգ
Լալայեանցի նախաձեռնութեամբ և պ. Ա. Դա-
տուրեանցի օժանդակութեամբ՝ որոնք իրանց
հասարակական գործեամբ շատ բաժանորդներ
կարող են գտնել: Միայն սպասում է, որ
տեղւոյս վաճառականները վերադառնալով Ռու-
սաստանից իրանց սովորական առատութեամբ
արձագանք ապրին այդ գործին:

Բժ. Արամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐԻ

Պ. Քիւրքեանի ֆոտոգրաֆիական ժողովա-
ծու, Անիի աւերակների պատկերների, ծախվում
է «Մշակի» խմբագրատան մէջ: Ժողովածուն ար-
ժէ 20 րուբլ Թիֆլիսի մէջ, իսկ օտարաքաղա-
քացիները թող բարեհաճեն 20 րուբլ գումարի
հետ ուղարկել փոստի ծախս 50 կոպեկ էլ: Այդ
50 կոպեկը կարելի է ուղարկել կամ փողով,
կամ փոստի մարկաներով:

Պ. Կադրենով իր վերջին ներկայացումն կը
ապ վաղը, հինգշաբթի օր, Արծրունու թատրո-
նում:

Ստացանք ԵՐԵՒԱՆԻՑ 16 րուբլ բաժանորդա-
գին «Ժուրնալ դ'Օրիան» համար հետեալ ան-
ձինքներից: Ռուսէն Զալալեանցից, Տրդատ
Վարդանեանցից, Վասիլ Լիլազարեանցից և
Մկրտիչ Միսնասարեանցից: Առաջվայ բաժանոր-
դական փողի հետ կանի 1089 րուբլ 53 կոպեկ:

Ստացանք 4 րուբլ բաժանորդագին «Ժուրնալ
դ'Օրիան» լրագրի համար պ. Միքայէլ Թամա-
շեանցից: Առաջվայ բաժանորդական փողի հետ
կանի 1093 րուբլ 53 կոպեկ:

ազգային ինքնաճանաչութեան ճանապարհի վրա:
Որչափ էլ անհաճելի լինի եռանդոտ մարդկանցի
համար, բայց թող տուէք հրապարակաւ ժպտալ
այդ կարծեաց վրա. ինքնաճանաչութիւն և
գիտական աշխատութիւնը անհրաժեշտ
այն բովանդակութիւն և ընդարձակ գաղափար
կայ այս երկու խօսքերի մէջ, որ շուտ տալով
նոցա իմաստի նաև հաղարկի մի մասը հայոց
վրա, բացի հեզնական ժպիտ ուրիշ բան չի երե-
ւայ մարդու երեսին: Որ և է աւելորդաբանու-
թեան նստել այս մասին, հաւատարմ ենք, որ
զուր է, երբ իւրաքանչիւր հայի աչքի առաջ
կանգնած են այն գործիչները, որոնք Մովսէս
Խորենացիից սկսած մինչև Նազարեանցը, գերեզ-
ման են մտել արհամարանք, հալածանք ու
ատելութիւն միայն ունենալով իրանց բա-
ժին... Միթէ նոյնը չէ եղել այն բազմաթիւ
գործիչների վիճակը, որոնք ամբողջ կեանքը ազ-
գի սիրոյն նուիրած, այնչափ խորը կերպով են
զգացել նորա վիշտ ու դժբաղդութիւնը, որ թէ-
պէտ սոված, թէպէտ մերկ ու ամեն տեսակ ֆի-
զիքական և բարոյական տաճարայնների մէջ, բայց
ամենը մոռացած, ամենը արհամարանք նոցա ապ-
րել են ու չնչել միայն իրանց տարաբաղդ ազգի
սիրով, նորա ցաւերը ողբալով, նորա տանջանք-
ներով արին թըլելով, բայց ոչ նոցա ա-
նուհետեւ, ոչ է Զօրայեանների, Թաղիադեան-
ների, Բեշիքթաշլեանների, Ալվատեանի, Մու-
րատ վարդապետի, Պողոս վարդապետի յիշա-
տակը: Նոցա բոլորն էլ մոռացված են այնպէս,
ինչպէս պիտի մոռացվեն շուտով և Արմինեանց-
ներ, և Նազարեանցներ, և Նազարեանցներ, և
Արծրունիներ, և Բաֆթիներ, և Պատկանեաններ:

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդագին
21 րուբլ ստացանք ՍՂՆԱԽԻՑ հետեալ անձե-
րից: Յարութիւն Շահվերդեան, Նշալօր Շահ-
վերդեան, օրիորդ Նատալիա Շահվերդեան, օրի-
որդ Կատարինէ Շահվերդեան, Իսահակ Շահվեր-
դեան, Սիսակ Սիմոնեան, Մովսէս Եարալեան,
Միքայէլ Տէր-Մատթէոսեան, Սէրգէյ Տէր-Մատ-
թէոսեան, Գրիգոր Փարեմուղեան, Ալէքսանդր
Գոցեան, Աննա Նիսեան, Աղալօ Մինասեան,
Վասիլ Մաթէշվիլի, Յովսէփ Կալստեան, Գրի-
գոր Ամիրաղեան, Գաբիթ Կաթեան, Խոս Բա-
կարիձէ (Թոշ) Զաքար Կորդանեան, Ալէքսանդր
Լիանոզեան, Յարութիւն Եարեան, Կոտէ Նադի-
րաշվիլի, Աղերօ Քիլիսեան: Առաջվայ բաժանոր-
դական գումարի հետ անում է 1114 րուբլ 53
կոպեկ:

ՓՕԹԻՑ մեզ գրում են, «Ամսիս 16-ին ծովա-
յին ալէկոնութիւնը մնաւ տուեց «Ռուսաց ըն-
կերութեան» շոգենաւորից մինչին, որ Ռուսաս-
տանից բերում էր բաւական ապրանք: Գիշեր
ժամանակ հասնելով Փօթիի ծովածոցի մօտ,
շոգենաւոր գցում է իր խարխիւր ծովածոցից
դուրս, ալէկոնութիւնը կատարել ժամանակ կըտ-
րում է խարխիւր և ներս է գցում շոգենաւոր
ծովածոցը: Զարնելով նախկին կամուրջի մնա-
ցորդին, ալէկոնները կիսով չափ ընկղմում են
շոգենաւոր մարդիկ, բաղաւորապէս անմիջա-
պատում են: Բայց եթէ շոգենաւոր սկզբից մը-
տած լինէր ծովածոցը և այնտեղ գցած լինէր
խարխիւրը, նա ամեն վտանգից ազատված կը
լինէր: Այս հանգամանքում մեղադրում են «Ռու-
սաց ընկերութեան» որ նա ըստ սկզբունքին
հակառակ լինելով Փօթիի ծովածոցի չինելուն,
արգելում է մեծ շոգենաւորին մտնել այդ ծո-
վածոցը»:

Մեզ գրում են Փօթիից և հետեալը: «Մեր
քաղաքի հայոց եկեղեցին կարճ ժամանակում
հրկու անգամ կողոպտված է եղել աւազակնե-
րից, որոնք տարան 400 րուբլ գումարի իրե-
ղէներ: Այդ մասին կարելի է մեղադրել երեց-
փոխանին իր անհոգութեան համար, որովհետեւ
եկեղեցին ոչ ժամկոչ ունի և ոչ պահպան»:

այսպէս է եղել մեր ազգի ինքնաճանաչութիւ-
նը՝ իսկզբանէ հետ մինչև հիմա...

Եթէ այս բոլոր օրինակներից հենց փոքր ինչ
ուշի գայիք, հենց փոքր ինչ ուղղվելու ճա-
նապարհի վրա դնէիք մեր ոտը, այդպիսի էլ
հերիք կը լինէր առ այժմ, բայց դժբաղդաբար
այդ էլ չենք տեսնում. երբ ռուսահայերի մէջ
որ և իցէ մի հայ գեներալի մահուան պատճա-
ռաւ Ս. Պետերբուրգից սկսած մինչև Լիբան հո-
գեհանգիստներ են կատարվում, հայ խմբագիր-
ները և գործիչները տաննակներով են տանջ-
վում, մաքառում, անհետանում, բայց նոցա վրա
մի ակնարկ անգամ չը կայ... Իսկ այստեղ աւելի
ևս ստրկութիւն, աւելի անդոյնութիւն ու փոք-
րոգութիւն: ձեզ հենց մի քիչ գաղափար տալու
համար թէ ինչ վիճակի մէջ է տաճկահայոց ազ-
գային ինքնաճանաչութիւնը, հեռու չեմ գնայ և
երկար չեմ խօսի, հերիք է, որ ցոյց տամ ձեզ
Մասիսի այս օրվայ համար թիւ 3008, որի
մէջ գրված են մի առանձին պարծանքով հետե-
ւեալ խօսքերը 34 տարի խմբագրութիւն արած
մարդու կողմից: Ահա տառական պատճէնը. «Իւ-
կոի պատգամներն, Կիզօի խոհներ, Թիեռի վը-
ճիւններն, Ժիւլ Սիմոնի ճառերն, Ժիւլ Ֆալլի
ճանթերն, հայր Կակիմոսի բողոքներն, Կառի-
պալտի քաջագործութիւնը, Բիպօտիի սխրա-
գործութիւնը միշտ արձագանք կը գտնէին Մա-
սեաց շէքրուն մէջ: Երբ երեսուն ու չորս տա-
րի խմբագիր» համարված մարդը այս գաղափա-
րը ունէ իր ազգային ինքնուրոյնութեան ու ազ-
գային փառք ու պատիւը ճանաչելու վրա, էլ
կարող էք հասկացողութիւն կազմել մնացածնե-
րի մասին... «Խմբագիր» կոչված բնամիտ և

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

«ԼԱՅՔԱՅԵ» լրագրի մէջ կարգում ենք
հետեալ յօդուածը:

Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի պա-
հանջած վերանորոգութիւնները և բարեո-
քութիւնը պէտք է իրագործվեն «հայերով
բնակեցրած նահանգների մէջ»: Այդ ա-
նունը, որ ընդունված է թիւրքաց Հայաս-
տանի աշխարհագրական տեղիների պակա-
սութեան պատճառով, կազմում է առա-
ջին գործնական արգելք յանկալի վերանո-
րոգութիւնները իրագործելու համար և
տարաբաղդաբար թիւրքաց կառավարու-
թիւնը օգուտ է քաղում այդ արգելքից
փոխանակ նրա առաջն առնելու: Այն
հարցը, թէ հայերով բնակեցրած ո՞ր նա-
հանգների մէջ պէտք է մտցնվեն պահան-
ջած վերանորոգութիւնները խառնում են
այն հարցի հետ, թէ ասիական թիւրքիայի
ո՞ր նահանգների մէջ հայ ազգաբնակու-
թիւնը մեծամասնութիւն է կազմում: Տա-
րաբաղդաբար հայերի թւի մասին տե-
ղեկութիւնները հակասող են. օրինակ
Կոլը իր ստատիստիկական յայտնի ժո-
ղովածուի մէջ հայերի թիւը որոշում
է 4¹/₂ միլիոն (1860 թ. հրատարա-
կութիւն), մի ուրիշ անգամ ընդամենը
2,931,000 (1879 թ. հրատարակութիւն)
և երկու դէպքերումն էլ կարծում է, որ
ասիական թիւրքիայի մէջ 2 միլիոն հայ
կայ: Մէյեր իր մեծ Conversations-lexi-
kon մէջ տաւում է, որ հայերը թւով 2¹/₂
միլիոն են կազմում և նրանցից Ասիական

անսիրտ արարածը առանձին պարծանք է համա-
րում իրան համար, որ 34 տարի պարապել է
միայն Գիզօյով, Տիբեթով ու Գարիբալդիով, բայց
ինչ է եղել այդ ժամանակ իր ազգի վիճակը
Հայաստանի մէջ, ինչեր են տեսել և ինչեր քա-
շել այնտեղ եկեղեցիներից, դերեքէյիներից, քիւր-
դերից, ալաւորներից և թիւրքամէններից հայ կիւնը,
հայ աղջիկը և հայ տղամարդը, ինչ անձնուրու-
թեամբ և գերբնական բարոյական ուժերով են
գիմարել նոցա ամեն տեսակ սարսափներին և
տանջանքներին, որով կարողացել են հերոսաբար
մինչև այսօր մօտ երկու միլիոն հայ հոգի պա-
հել իրանց պապերի գերեզմանների մօտ—այդ
մասին Գարիբալդիի կեանքի հետ մանրամասնա-
բար հայ հասարակութիւնը ծանօթացնող լրա-
գիրը նոյնչափ հոգատար է եղել, որչափ Չինաս-
տանի ժողովրդի վիճակը իմանալու համար, էլ
որն է «ազգային գիտակցականութիւն և ինքնա-
ճանաչութիւն» տալով խօսքերը... Մենք միշտ
միշտ—անհմ մեր ինքնաճանաչութիւնը...

Ահա այս տեսակետով և այս սրտամաշ դըր-
դումից էր, որ վերջացնելով հաշիւս Կ. Պօլսի
թշուառ ինտելիգենցիայի հետ, որոնցից պարապ-
վել մի քանի ժամանակ այն արժանաւոր գոր-
ծիչների արարքներով, որոնցից այդ ինտելի-
գենցիան ինչպէս է նաև մի չնչին վարձատ-
րութիւն—պարտու պատշաճ յարգանք և ուշադ-
րութիւն: Վստիւրդ փառստեան, Օղեան, Մու-
րատեան, Միսակեան, Կարակաշեան, Պարոնեան
կը լինեն այսուհետեւ մի քանի նամակներիս
նիւթը: Սկսեմք առաջինից: Իր ամբողջ կեանքի
և գործունէութեան մէջ կարապետ փառստեանը

Թիւրքիայի մէջ ամենաշատ 1 միլիոն են բնակվում Բրիտանական Էնցլոպաեդիայի (Encyclopaedia Britannica) II բաժնում հայերի մասին յօդուածի մէջ հայերի ընդհանուր թիւը Գիւլիսիէի հետ համարձայն որոշված է 4 միլիոն. նրանցից բնակվում են Թիւրքիայի մէջ 2 1/2 միլիոն, Ռուսաստանի մէջ 1,200,000, Աւստրիայի մէջ 25,000, Պարսկաստանի մէջ 150,000, Հնդկաստանի և Ասիական Արևելագետների վրա 25,000 և զանազան տեղերում 100,000: Բայց այդ թուանշանները ընթացող դարի կէսին են կազմված: Յուլիսի 5-ին տուած իր պաշտօնական գրութեան մէջ Բ. Դուրը հայերով բնակեցրած վեց նահանգներին մէջ նրանց թիւը ընդհանուր ազգաբնակչութեան 16% է համարում, ուրեմն այդպիսով հայերի թիւը Ասիայում 300,000 պէտք է լինի: Մինչդեռ «Journal d'Orien» լրագրի տեղեկութիւնների համեմատ, որ հայոց պատրիարքի հրամանով և հայ հոգեւորականութեան օգնութեամբ Փոքր-Ասիայում կատարված ազգագրութեան հետեւն է, վեց վիլայեթների, այն է՝ Էրզրումի, Վանի, Սիվասի, Կարպուտի, Գիար-բեքիւրի և Ալեպպի 1,831,300 բնակչւնից 40% աւելի: Իսկ եթէ նրանց թիւին աւելացնենք մնացած քրիստոնեաներին, այն ժամանակ 100 մարդուց 58 քրիստոնեաներ կը լինեն, իսկ 42 մահմետականներ: Ամենից շատ հայեր բնակվում են Վանի վիլայեթի մէջ (252 1/2 հազար), յետոյ Կարպուտի վիլայեթի մէջ (158 հազար) և յետոյ Էրզրումի (134 հազար): մնացած երեք վիլայեթներից Էրաքանդիւրի մէջ հայերի թիւը 100 հազարից պակաս է: Թիւրքիա-հայաստանի հայերի ահագին մեծամասնութիւնը հայ լուսաւորչականներն են: Հայկաթօլիկները համեմատական մեծամասնութիւն են կազմում Սիվասի մէջ, այնուհետև Գիարբեքիւրի մէջ մնացած հայերի 12% և Էրզրումի մէջ հայ-կաթօլիկները 10% են: Բոլոր վեց վիլայեթների մէջ հայ բողոքականների թիւը հասնում է 15 հազարի և ամենից շատ Կարպուտի մէջ, ուր 100 հայ-լուսաւորչականներից 7 բողոքական են:

Իր բնական ժողովրդային ինտստիկտով հետեւած է միանգամայն երկու ուղղութեան՝ Արդիւնացի և Նազարեանցի: Դաստիարակվելով յայտնի դադաղ Յարութիւնի փոքր Հայաստանից բերել տուած մի քանի սաների շարքում խմբի Մեսրոպիւնի վարժարանի մէջ, իսկ յետոյ դասեր լսելով Կ. Պոլսի բժշկական ձեմարանում, փառնոսեանը ասպարէզ է դուրս եկել մի այնպիսի փառած սիւսլաստիկ և գրաբարեան—վանական սիստեմայի ժամանակ, երբ ուսումը ոչինչ յարաբերութիւն չէ ունեցել ժողովրդի խօսող լեզուի, վարող կեանքի և զգացած պէտքերի հետ: Ինչպէս արած այսպիսի պարագաների մէջ իր բոլորեթած ազգային զգացմունքներին և անդադար բողոքող մտքի պահանջներին բաւարարութիւն տալու համար. Բնչպէս արած տգիտութեան ու խաւարի մէջ փոքր Հայաստանում ընկղմած, թրքաբոս, օտարացած ու խորթացած հայ տարրի սիրտ ու միտքը արթնացնելու, նորա ասիացած ու բթացած ազգային զգացմունքները գրգռելու ու վառելու համար, Բնչպէս արած մօտ կէս միլիոն հայ ազգաբնակչութեան մէջ ազգ, ազգային գործ, շահ, նամուս և գրգռ. ասված խօսքերի վրա գաղափար մտցնելու համար: Ահա այս հարցերն են եղել պ. Փանոսեանին տանջող հարցերը, որոնց վրա նա սկսել է մտածել իր ուսման ընթացքը աւարտելուց յետոյ Զարմանալի համանմանութիւն իրաչառութիւն Արդիւնացի գրութեան հետ, երբ նա վերադարձաւ Գորպատից:

Այդպիսի խոր մտաւոր և բարոյական պահանջներն ի հարկէ ուրիշ բաւարարութիւն տալու միջոց չէր լինի, բացի մի օրգան, մի լրագիր, ու

Թիւրքիա-հայաստանի հայերի այժմեան վատթար դրութեան նմանը չէ կարելի գտնել այդ ազգութեան մինչև անգամ ցաւալի անցեալի մէջ: Ահա, հաստատ աղբիւրներինց ինչպէս փաստեր են պատմում, որոնք նկարագրում են գործերի դրութիւնը փոքր-Ասիայի մէջ: Հայ վաճառականը թիւրքոյ կառավարութեանից 1,200 լիւրայի ստանալիք ունենալով, ներկայանում է տեղական կայմակալին և փող ստանալուց յետոյ նորից ծառայարհ է բնկնում, բայց մօտակայ գիւղի մէջ երկու մարդ երեաները մուրով ներկած փորձում են նրան կողոպտել: Յայտնվում է, որ կողոպտողները եղել են կայմակալը և նրա քարտուղարը «Մասիս» լրագրին հաղորդում են, որ Բայազէտի փաշայի մէջ գտնվող Ուշ-Կիլիսա վանքը ներթարկվել է քիւրդերի կողոպտմանը և այդ ժամանակ տարված են բաւական նշանաւոր ձեռագիրներ: Բայց ահա աւելի տխուր մանրամասներ, որոնց քաղում ենք «Journal d'Orien» լրագրի վերջին համարից: Վաթիսուն հայեր գտնադաւել են, որ Մուշի և Զուկուրի կայմակալութեան ազգաբնակչութիւնը տանջվում է կրկնապատկող չարիքներից: Հասարակական ապահովութիւն չը կայ և ազգաբնակչութիւնը վայրենի քիւրդերի կամայականութեան է ենթարկված, որոնք ամեն տեղ աւերում են և սարսափ են գրգռում:

(կը շարունակվի)

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիան թէև վաղուց հանրապետութիւն էր, բայց երկար ժամանակ չէր հրատարակում ժողովների ազատութեան օրէնքը: Վախկոտ բուրժուազիան կարծում էր որ եթէ թոյլ տրվի ամբոխին ժողովելու ազատութիւնը, ծայրայեղ արմատական կուսակցութիւնը անպատճառ ի չար կը գործածի այդ իրաւունքը: Փարիզի բնակչւնները կարծում էին թէ հէնց որ հաւաքվելու և հրապարակական ժողովներ կազմելու կատարեալ ազատութիւն կը տրվի, անմիջապէս կը ծագի մի յեղափոխութիւն: Ֆրանսիացիները երեւակայութեան առջև

իր միջոցով հեշտացնէր նա իր սիրտը և լցուցանէր մտքի պահանջը: Բայց որ լեզուով պէտք էր հրատարակել նորան, այդ է անլուծանելի խնդիրը, որովհետև եթէ նա հայերէն հրատարակվէր, Փոքր Հայաստանում մի հատ հայերէն լեզուով չը կար, եթէ թիւրքերէն հրատարակվէր, թիւրքաց լեզուն էլ ոչ լրագրական լեզու ունէր և ոչ լրագիր, որին կարելի լինէր գտնէ նրա մանութիւն անելու Գանձելով այսպիսի դրութեան մէջ մշտու միայնակ երիտասարդը ձեռնարկում է ուրիշ միջոցներ. նա մտնում է ժողովրդի մէջ և սկսում է գործնական ձանապարհով պրօպագանդա անել և ուսուցանել տղէտ ժողովուրդը: գտնելով հարկաւոր գումարը, նա հաստատում է ժողովրդի մէջ առաջին անգամ շոգիի աղօթիք (паровая мельница), եւրօպական կերպով լուսարար և հացագործութիւն, բայց մի լայնագիւղ մարդու հոգին բաւարարութիւն չէ գտնում մի այսպիսի նեղ և պրօպագանդական գործունէութեան մէջ, վասնորոյ թողնելով այդ, նա սկսում է անում վերջապէս հայոց տառերով հիմնել մի թիւրքաբոս լրագիր փոքր Հայաստանի մի նուիրական սարի անունով, որը կոչվում է «Առջի հաս» (իբր թէ Նոյեան տապանը առաջ հասաւ այդ լեռան գլուխը, իսկ նա չուզէնալով վերադառնալ իր աւագ եղբայր Մասիսը, ուղարկելու տապանը նորան): Այսպիսով 1859 թ.ին հիմնվում է մի թիւրքաբոս լրագիր Մուշի և Վուշի հասի վերնագրով, որի վրա յետոյ աւելանում է տպագրական օրէնքների մի քանի արգելքների պատճառում աւելի անդայ (ազգային տեսակէտից) անուն Մանգումէի է ֆեւար (չար կարծեաց):

Ծնվում էր արդէն արեւահեղ յեղափոխութեան, կոմունայի ուրուականը: Բայց նորերում հրատարակեցաւ ժողովելու ազատութեան օրէնքը, ամբողջ, հասարակութեան ստորին դասակարգը, բանւորների պրօլետարիատը սկսեց ահագին ժողովներ կազմել, որտեղ գումարվում են մի քանի հազար մարդիկ, ծառայողները արտասանում են այրող, յեղափոխական ծառեր, հանդիսականները ամենածայրայեղ վճիռներ են կայացնում, դատաւարտում են միմիտներին մահվան, կախաղանին անգամ,— ոչինչ յեղափոխութիւն չէ ծառում, Փարիզը կատարեալապէս հանգիստ է, փողոցներում շարունակվում է սովորական երթևեկութիւնը....

Ֆրանսիացիները վերջապէս հասկացան որ փառնաւոր, ծայրայեղ վարդապետութիւնները այն ժամանակ ֆիւսսական և փառնաւոր են, մինչև որ նրանք արգելված են լինում, մինչև որ ամենքին չեն թոյլ տալիս կատարեալապէս ազատ կերպով յայտնվել, հրապարակապէս արտայայտվել: Բայց հէնց որ մի ամենածայրայեղ մտքին, ամենախելազար գաղափարին, ամենաանձուռն վարդապետութեանը թոյլ է տրվում ազատօրէն յայտնվելու, թէ մամուլի և թէ ժողովների մէջ, այդ տեսակ ծայրայեղ վարդապետութիւնները անմիջապէս կորցնում են իրանց գրաւիչ ոյժը և այլ ևս չեն բորբոքում ժողովուրդը, դառնում են կատարեալապէս անփառնաւոր:

Ֆրանսիան պ. Գրէվիի նախագահութեան օրով հասաւ ճշմարիտ քաղաքական հասունութեանը: Նա Շվեյցարիայի և Անգլիայի պէս մամուլի կատարեալ ազատութիւն և ժողովների անսահման ազատութիւն է վայելում և համոզվել է որ կատարեալ ազատութիւնը ամենալաւ դիւ է փառնաւոր և մոլորեցնող ամեն վարդապետութիւնների դէմ:

Փարիզի մէջ այս օրերս կայացած արմատական կուսակցութեան ժողովներ, որտեղ հազարաւոր բանւոր հանդիսականների ներկայութեամբ ամենայեղափոխական մտքեր էին յայտնվում ամբիօնից և ժողովը հանգիստ կերպով կայացնում էր ամենամանձուռնի վճիռներ: Ոչ մի պօլիցիական ներկայութիւն էր արդէն արեւահեղ յեղափոխութեան, կոմունայի ուրուականը: Բայց նորերում հրատարակեցաւ ժողովելու ազատութեան օրէնքը, ամբողջ, հասարակութեան ստորին դասակարգը, բանւորների պրօլետարիատը սկսեց ահագին ժողովներ կազմել, որտեղ գումարվում են մի քանի հազար մարդիկ, ծառայողները արտասանում են այրող, յեղափոխական ծառեր, հանդիսականները ամենածայրայեղ վճիռներ են կայացնում, դատաւարտում են միմիտներին մահվան, կախաղանին անգամ,— ոչինչ յեղափոխութիւն չէ ծառում, Փարիզը կատարեալապէս հանգիստ է, փողոցներում շարունակվում է սովորական երթևեկութիւնը....

Լրագիրը հիմնելուց յետ փանոսեանը դառնում է մի ճշմարիտ Աստուծոյ ուղարկած պատիժ և պատուհաս հայի անտարբերութեան համար. արծարծելով մի կողմից եւրօպական մշտքեր և տեղեկութիւններ իր բազմաթիւ ընթերցողների մէջ, որոնց թիւը մի ժամանակ հասնում է մօտ հինգ հազարի, միւս կողմից սկսում է քննադատել փոքր Հայաստանի խաւար, ստորիկ ու բարոյապէս և մտաւորապէս կաշկանդված իր եղբայրների թիւրքացած վարքը, անշարժութիւնը, կաղունխտը, սովորութիւնները, նախապաշարմունքները և բոլոր այս տեսակ թեւորութիւնները: Մեծ շարժում և խլրտում է ընկ-

կայ չէր գտնվում ժողովի ահագին դահլիճում, միայն դուրսը պօլիցիան պահպանում էր սովորական կարգը, որպէս զի փողոցների մէջ երթևեկութիւնը չը խափանվի: Փարիզի խաղաղ բնակչւնը հանգիստ ողով անցնում էին ժողովի դրան առջև, շատերը հետաքրքրութիւնից մտնում էին հրապարակական ժողովը և լսում էին թէ ինչպէս ամբիօնի բարձրութիւնից ծառախօսները մինը ապացուցանում էր թէ միմիտները գողեր են, ազգային փողերի յափշտակիչներ են, միւսը առաջարկում էր վճիռ կայացնել թէ ազգը յայտնում է նրանց օրէնքից դուրս, երրորդը առաջարկում էր մահվան դատաւարտել բոլոր միմիտներին: Եւ ժողովը այդ տեսակ վճիռներ կայացնելուց յետոյ, հանգիստ ցրվում էր:

Մամուլի կատարեալ ազատութիւնն էլ ամենևին չը բերեց այն ֆիւսսը, որ սպասում էին և մարգարէանում էին յետագէտ և կղերական լրագիրները: Ամենքը հանգիստ կերպով կարգում են ամենածայրայեղ յարձակմունքները Գամբետայի, Գրիվիի և ուրիշների վրա, ժպտալով նայում են բոլոր գործող պետական անձանց վրա նկարված ծաղրական պատկերներ և համոզվում են որ դրանց նշանակութիւն և ժողովրդականութիւն ունեցող անձինք ամենևին չեն կորցնում իրանց հեղինակութիւնը, այլ ընդհակառակն աւելի էլ մեծ հեղինակութիւն են ստանում:

ԱՆԳԼԻԱ

Իրլանդիայի մէջ դժուարութիւնները սաստկանում են: Պօլիցիայի և ժողովրդի մէջ մի քանի անգամ արիւնհեղ կոիւններ են պատահել: Այնու ամենայնիւ իրլանդացիներն նշան չէ տուած ընդհանուր ապստամբութեան համար և մինչև անգամ ամբիօն կացիք խորհուրդ են տալիս իրլանդացիներին սպասել: Լիմերիկի մէջ, որտեղ կալուածական միութեան ժողով պէտք է կայանար, պօլիցիան 600 զինուորների օգնութեամբ չը կարողացաւ ցրվել ամբոխին, որ

նում փոքր Հայաստանի մէջ. արթնանում է ազգային սիրտը, միտքը, մարդկային պատաճանալութիւնը, ուսման և յառաջդիմութեան սէրը: Եթէ մի մեծ տնտեսական բարոյական տարբերութիւն ենք տեսնում այսօր Բարձր Հայաստանի և փոքր Հայաստանի հայերի մէջ. եթէ փոքր Հայաստանի հայը այսօր ոչ բեռնակիր է և ոչ մուսուլման տարրի սարկահոյի մէջը (զոնէ նոյնպիսի, որպիսի Բարձր Հայաստանի հայը), այդ անշուշտ գլխաւորապէս քաջահոգի կեսարացի պուրլիցիստի չնորիւն է:

Մանգումէի տուած ցնցումից փոքր Հայաստանի երիտասարդութիւնը վերթաւ քիչ, չուտով երեքնայն դպրոցներ և ընկերութիւններ զանազան քաղաքներում, ինչպէս Կեսարիա, Սամիսոն, Եզդղադ, Մարդան, Եզդիկա և այլն: Մինչդեռ Բնչ էր չինում այդ ժամանակ Մասիսը, որի ձանապարհը ընկել էր դէպի Բարձր Հայաստան. Մասիսը գործում էր բոլորովին հակառակ կերպով. նա ոչ թէ հետեւում էր իր լրագրի լեզուն պարզել և մօտեցնել ժողովրդի լեզուին, այլ նա միայն բաւարարել ձեռքին որչափ կարելի է ֆանտաստիքական բառեր և լեզու էր հնարում, որը ոչ միայն քառն երեսուն տարի առաջ ժողովուրդը չէր կարող բնաւ հասկանալ, այլ չէ հասկանում և հիմա էլ: Դա դեռ հերթ չէ, այլ փոխանակ իր ուղարկութիւնը դարձնելու Հայաստանի հայ ժողովրդի վիճակը դառնալու: Մասիսը, ցաւը իմանալու, Մասիսը, ինչպէս ինքն է ասում այսօր, Գիւլիսի խորհրդածութիւններն է թարգմանել, Տիբրի վճիռները, Հիւզոյի պատգամները և այլն: Իսկ եթէ պատահում էր թղթակցութիւն Հայաստանից, այդ էլ

